Ա. Ա. ՀՈՎՍԵՓՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿՈՒՍԱԿՑԱԿԱՆ ՄԱՄՈՒԼԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԻՑ (1941—1945)

Ֆաշիստական Գերմանիայի կողմից Սովետական Միության դեմ 1941 թ. սանձազերծված պատերազմը քարուքանդ արեց հազարավոր ընտանիքներ։ Արևմտյան շրջաններից տասնյակ հազարավոր սովետական քաղաքացիներ ստիպված էին հեռանալ իրենց հարազատ օջախից և էվակուացվել մեր երկրի խորքը՝ արևելյան շրջանները, այդ թվում Սովետական Հայաստան։

Այստեղ նրանց դիմավորում էին որպես հարազատների, շրջապատում հոգատարությամբ, ապահովում բնակարանով, աշխատանքով, սննդամթերքով։ Հազարավոր երեխաներ տեղավորվեցին մանկական հիմնարկներում։ Հայաստանի կուսակցական և սովետական կազմակերպությունները արեցին բոլոր հնարավորը էվակուացված բնակչությանը, այդ թվում զինծառայողների ընտանիքներին օգնություն ցույց տալու համար։ Զինծառայողների ընտանիքներին նշանակվեց նպաստ։

Անդրկովկասյան ռազմաճակատի ռազմախորհրդի 1942 թ. նոյեմբերի որոշմամբ անդրկովկասյան հանրապետություններում էվակուացման հետևանքով մարդկային հոսանքը ուժեղանալու կապակցությամբ ռազմախորհրդին կից ստեղծվեց հեղինակավոր հանձնաժողով, որին իրավունք վերապահվեց անդրկովկասյան հանրապետություններում էվակուացված բնակչությանը աշխատանքի տեղավորելու և այդ բնակչության կյանքը կազմակերպելու հետ կապված հարցերը որոշելու[1]։

Հայաստանում ճակատայինների ընտանիքների, էվակուացված մյուս քաղաքացիների կարիքները հոգալու բնագավառում մասնավորապես աչքի ընկնող ծառայություններ մատուցեց «Սովետական Հայաստան» թերթի խմբագրությանը կից ստեղծված կանանց հանձնաժողովը։ Այդ հանձնաժողովի գործունեության շնորհիվ հանրապետության կոլտնտեսություններում ստեղծվեցին գյուղատնտեսական մթերքների և դրամական միջոցների ֆոնդեր։ Իսկ Լենինականի քաղսովետի գործադիր կոմիտեն 1941 թ. նոյեմբերի 9-ին որոշեց իր ֆոնդերից ամսական 500 ռուբլի նպաստ սահմանել զինծառայողների էվակուացված յուրաքանչյուր ընտանիքին[2]։

Հանրապետության մամուլը պարբերաբար հոդվածներ ու հաղորդումներ էր հրապարակում տեղի բնակչության կողմից էվակուացված քաղաքացիներին ընդունելու, նրանց հոգատարությամբ շրջապատելու մասին։ Թերթերը միաժամանակ ընդգծում էին այդ բնագավառում տեղ գտած առանձին թերությունների (մասնավորապես սանիտարական սպասարկման ուղղությամբ) անհապաղ վերացման անհրաժեշտությունը։

---

1 Հայկական ՍՍՀ ՀՀՍՇ ՊԿԱ, ֆ. 40/113, ց. 6, գ. 71, թ. 17։

2 Լենինականի քաղսովետի գործկոմի գործավարություն, գ. 5, թ. 250։ (Հոդվածում դրամը տրվում է հին կուրսով)։

ՀՍՍՀ ԺԿԿ-ի էվակուացված բնակչության անտեսության կազմակերպման բաժնի վարիչի զեկուցագրից երևում է, որ առ 1-ը հոկտեմբերի 1942 թ. Հայաստան է էվակուացվել 21362 հոգի։ Նրանք հիմնականում տեղավորվել էին Ալավերդում, Լենինականում, Երևանում, Ստեփանավանում, Կիրովականում և մասամբ էլ այլ բաղաքներում։ Տեղական արդյունաբերության ձեռնարկությունները իրենց հերթին ընդարձակում են արտադրական ցանցը՝ էվակուացված բնակիչներին աշխատանքով ապահովելու համար[3]։

Այդ գործի հետ կապված բոլոր հարցերը ժամանակին լուծելու նպատակով 1943 թ. ստեղծվում է զինծառայողների ընտանիքների և էվակուացված բնակչության պետական ապահովման և կենցաղային կազմակերպման վարչություն, որի նախագահը միաժամանակ համարվում էր ժողովրդական կոմիսարների խորհրդի նախագահի տեղակալը։

Կուսակցական և սովետական կազմակերպությունները մեծ հոգատարություն էին ցուցաբերում էվակուացված երեխաների նկատմամբ։ Նախ, կազմակերպվեց գերմանացիների կողմից օկուպացված շրջանների սովետական երեխաների էվակուացումը խորը թիկունք, այդ թվում Հայաստան, որտեղ նրանք շրջապատվեցին սիրով ու հոգատարությամբ։ Նրանցից շատերը այստեղ էին հասել հյուծված, հիվանդ, նույնիսկ վիրավոր վիճակում։ Հայաստանի ԿԿ Կենտկոմը հատուկ որոշում է ընդունում մանկական հիմնարկների ցանցը ընդարձակելու, կանանց և երեխաների բուժսպասարկումը բարելավելու մասին[4]։

Պատերազմի առաջին շրջանում կենսագործվեց մեծ ծրագիր՝ հանրապետությունում մանկամսուրների, մանկատների, կոնսուլտացիաների, կաթնամթերքների խոհանոցների, մանկապարտեզների և այլ հիմնարկների թիվը ավելացնելու ուղղությամբ։

1942 թ. մայիսին Ստեփանավանի շրջանի Ագարակ գյուղի դպրոցի ուսուցիչները և աշակերտները հանրապետական թերթերի միջոցով դիմում են Հայաստանի դպրոցականներին կոչով՝ ֆաշիստական ագրեսիայի հետևանքով տուժած երեխաների համար օգնության ֆոնդ ստեղծելու մասին։ Թերթերը լայնորեն տարածում են այդ շնորհակալ նախաձեռնությունը, որը մեծ արձագանք գտավ հանրապետության դպրոցներում[5]։

Էվակուացված երեխաների վիճակի մասին թերթերը հրատարակեցին կարմիր բանակի ռազմիկների տագնապալից նամակները։ Պատասխանելով այդ նամակներին «Սովետական Հայաստանը» 1942 թ. հոկտեմբերի 1-ի համարում գրում է. «Սովետական ռազմիկները կարող են հանգիստ լինել իրենց երեխաների վիճակի համար, երեխաները շրջապատված են սովետական կառավարության և կուսակցության հոգատարությամբ, որոնք այն համարում են պետական կարևորագույն գործ»[6]։

Հայաստանի կոմերիտմիությունը 1942 թ. հունիսին Պետրանկում հատուկ ընթացիկ հաշիվ է բացում ճակատայիններին երեխաներին և էվակուացվածներին օգնելու համար, որին ակտիվորեն մասնակցեց հանրապետության երիտասարդությունը։

---

3 ՍՄԿԿ Կենտկոմին կից Մեծ հայկական ֆիլիալի արխիվ, ֆ. 1, թ. 532, կ. 5, թթ. 78—80։
4 «Коммунист» թերթ, 20 դեկտեմբերի 1944 թ.։
5 Նույն տեղում, 21 մայիսի 1942 թ.։
6 «Սովետական Հայաստան», 1 հոկտեմբերի 1942 թ.։

Այդ մեծ հայրենասիրական գործը գնալով ծավալվեց և ընդգրկեց նորանոր կոլեկտիվներ։ Այսպես, հանրապետության թատրոնները կարմիր բանակի 26-րդ տարեդարձի առթիվ տվեցին 80 ներկայացում, որից ստացված 50915 ռուբլի դրամը նույնպես հատկացրին ճակատայինների երեխաների օգնության ֆոնդին։ Այդ նպատակով ստեղծված ֆոնդը 1944 թ. կազմում էր 3.150,000 ռուբլի, ձեռք էր բերված 40.150 կոմպլեկտ թեթև հագուստեղեն, 36,050 զույգ կոշիկ և բավական ուսումնական պիտույքներ[7]։

Պատերազմի տարիներին սովետական մարդիկ տագնապ էին ապրում թշնամու օդակում գտնվող Լենինգրադի երեխաների համար։ 1942 թ. սկզբին քաղաքի № 82 մանկատան երեխաները դուրս բերվեցին շրջապատումից։ Սովի, տառապանքների և հիվանդությունների հետևանքով հյուծված այդ երեխաները տեղափոխվեցին Երևան։ Նրանց հատկացվեց երեքհարկանի մի շենք։ Քաղաքի մի շարք կազմակերպություններ վերանորոգեցին և կարգի բերեցին այդ շենքը, ապահովեցին համապատասխան կահույքով, նույնիսկ դաշնամուրով, երեխաներին բավարարեցին անկողնով, ամանեղենով ու հագուստով։ Ստեղծվեցին ապրելու և խաղալու նորմալ պայմաններ։

Այդ հոգատարության համար մեր ռազմիկները իրենց շնորհակալական նամակներում խոստանում էին էլ ավելի անխնա լինել թշնամու նկատմամբ, ուժեղացնել իրենց հարվածները։

Հանրապետության թերթերը օգնում էին գտնելու և կապ հաստատելու ծնողների և երեխաների միջև։ 1942—43 թթ. ընթացքում Երևան տեղափոխված Լենինգրադի № 82 մանկատան 40 երեխաների և նրանց ծնողների միջև կապ է հաստատվում։ Երեխաների և ծնողների ուղարկած նամակները լի էին ատելությամբ դեպի թշնամին[8]։

Այսպիսով, Հայկական ՍՍՀ-ն Հայրենական մեծ պատերազմի դաժան տարիներին սիրով ու հոգատարությամբ շրջապատեց մեր հայրենիքի արևմտյան շրջաններից էվակուացված պինդառայողների և սովետական այլ երեխաներին, արեց ամեն հնարավորը նրանց կյանքի, հանգստի և ուսուցման համար։

Հայրենական պատերազմի տարիներին մեր ժողովրդի ամենօրյա գործունեության կարևորագույն հարցն էր դարձել նաև վիրավորված զինվորների, սերժանտների, սպաների ու գեներալների բուժումը, նրանց առողջության վերականգնումը և շարք վերադարձնելը։

Մեր միության հարավային այլ հանրապետությունների թվում Հայկական ՍՍՀ վեր էր ածվել սովետական վիրավոր զինվորների առողջարանների։ Մոբիլիզացվել էին բժշկական կադրեր և նրանց օգնող բազմաթիվ այլ աշխատողներ, որոնք անում էին ամեն ինչ վիրավորված ռազմիկների կյանքը փրկելու համար։

Այդ աշխատանքը ըստ արժանվույն գնահատվեց մեր կուսակցության և կառավարության կողմից։ Այդ օրերին «Պրավդա» թերթը գրել է. «Թիկունքային հոսպիտալում բժշկի, ֆելդշերի, բուժքրոջ, սանիտարի, խոհարարի, հավաքարարի, ամեն լվացողի աշխատանքը լի է իսկական անձնուրացության և հերոսության օրինակներով»[9]։

---

7 «Коммунист» թերթ, 16 օգոստոսի 1944 թ.։
8 «Коммунист», 21 հունվարի 1945 թ.։
9 «Правда», 10 փետրվարի 1942 թ.։

Հանրապետության առողջապահության մինիստրությունը Հայրենական պատերազմի առաջին իսկ օրերից մեծ աշխատանք ծավալեց էվակոհոսպիտալներ կազմակերպելու համար։ Հայաստանի ԿԿ Կենտկոմը և կառավարությունը էվակոհոսպիտալների համար առանձնացրին այդ նպատակին համապատասխանող ամենալավագույն շենքերը։ Լենինականում, Իջևանում, Դիլիջանում, Արզնիում և այլուր ստեղծվեցին մոտ 30 հոսպիտալներ, ավելի քան 10 հազար մահճակալով։

Բացի դրանից, Երևանում էր գտնվում 45-րդ բանակի սանրաժինը, և 12 այլ բժշկական հիմնարկներ, բանակի դաշտային լաբորատորիան, դաշտային էվակոկայանը և այլն[10]։

Հայաստանի ԿԿ Կենտկոմին կից, երկրորդ քարտուղարի նախագահությամբ ստեղծվեց հատուկ կոմիտե՝ կարմիր բանակի վիրավոր զինվորներին և հրամանատարներին օգնելու համար[11]։

Վիրավորների բուժման գործում բժիշկներին օգնության եկան խորհրդային, կուսակցական և կոմերիտական կազմակերպությունները, կարմիր խաչի ընկերությունները, տնային տնտեսուհիները և ուրիշներ։ Այդ գործին մեծ ծառայություն մատուցեց Հանրապետության մամուլը։

Հայաստանի աշխատավորությունը, կոլտնտեսությունները, բանվորները, ծառայողները հոսպիտալներին ուղարկում էին նվերներ, հաճախ իրենք էին գալիս վիրավորներին տեսության, զպրոցականները ուղարկում էին թերթեր, գրքեր վիրավորների համար՝ նրանց թելադրությամբ նամակներ էին գրում հարազատներին։

Հանրապետության հոսպիտալները սպասարկում էին բարձր կվալիֆիկացիայի մասնագետներ, մատակարարվում էին այն ամենով, ինչ պետք էր վիրավորներին վերադարձնելու ուժ և առողջություն։ Հոսպիտալ եկած ռազմիկի համար արվում էր ամեն ինչ, որ նա մշտապես զգար ճակատի և թիկունքի կապը, ունենար լավ տրամադրություն։

Հայաստանի ԿԿ Կենտկոմը իր դիրեկտիվ ցուցումներով հանձնարարել էր Երևանի, Լենինականի քաղկոմներին, Կիրովականի, Վաղարշապատի, Իջևանի, Դիլիջանի և այլ շրջկոմներին, կենտրոնական, շրջանային թերթերի խմբագրություններին՝ ձեռնարկել բոլոր միջոցները բարելավելու հանրապետությունում գտնվող վիրավոր ռազմիկների նյութական-կենցաղային վիճակը, կուլտուրական սպասարկումը[12]։

Այդ առթիվ էվակոհոսպիտալներից մեկից գրում են. «Արթիկի շրջանի օգնությունն արտահայտվեց այն բանում, որ այդ շրջանի կոլտնտեսությունները շնֆական կարգով առանձնացրեցին տեղամաս, որտեղ ցանել էին բանջարեղեն, ինչպես և 7 տոննա կարտոֆիլ և հանձնել հոսպիտալին։

Միկոյանի շրջանի աշխատավորությունը նվիրատվության կարգով Հոկտեմբերյան հեղափոխության տարեդարձի օրերին հոսպիտալ էր ուղարկել 450 լիտր գինի, 66 կգ. լավաշ, 15 կգ. զաթա, 194 կգ. չորացրած միրգ, 20 կգ. ծխախոտ, 10 կգ. հալվա»[13]։

---

10 ՍՍՀՄ ՊՄ արխիվ, ֆ. 34, գ. 3, թ. 2210։
11 ՀՍՍՀ ՀՀՍՇ ՊԿԱ, ֆ. 118, ց. 3, գ. 146, թ. 19։
12 ՍՄԿԿ Կենտկոմին կից Մեծ Հայկ. ֆիլիալի կուսարխիվ, ֆ. 1, պ. մ. 31, թ. 18։
13 ՍՍՀՄ ՊՄ արխիվ, Ցեղ. 2469, գ. 6, թ. 29։

Ախտայի կուսակցական շրջանային կոմիտեն 1941 թ. նոյեմբերի 27-ի նիստում ընդունած որոշման մեջ նշում է, որ շրջանի կոլտնտեսություններից ամեն օր Դարաչիչակի հոսպիտալը ստանում է տասնյակ կիլոգրամներով սննդամթերք։ Շրջկոմի բյուրոն միաժամանակ հանձնարարում է շեֆ-բյուրոյի նախագահին վիրավորներին ապահովելու ոչ միայն հանրապետական, այլև ՍՍՀՄ ժողովուրդների ազգային լեզուներով լույս տեսնող թերթերով[14]։

ՍՍՀՄ առողջապահության մինիստրության հոսպիտալների խորհրդի 1942 թ. մայիսի 5-ին կայացած առաջին պլենումը բարձր գնահատական տվեց Հայաստանի տերիտորիայում գտնվող էվակոհոսպիտալների աշխատանքներին[15]։

Հանրապետական «Կոմունիստ» թերթը 1942 թ. փետրվարին ուշադրություն դարձնելով դեպի հոսպիտալները, գոհունակությամբ նշում է, որ այնտեղ ամենուրեք տիրում է մաքրություն և հրապուրանք։ Դրանում է արտահայտվում ոչ միայն անձնակազմի, այլև դպրոցական երիտասարդության մեծ ծառայությունը։ Բարձր դասարանցիները գալիս էին հոսպիտալները, լվանում, կարկատում վիրավորների սպիտակեղենը[16]։

Թերթի 1942 թ. մայիսի 1-ի համարում զետեղված «Կոլտնտեսական Մովսես Հարոյանի հայրենասիրական արարքը» հաղորդման մեջ ասված է այն մասին, որ տոնի նախօրյակին էվակոհոսպիտալ ներկայացավ հեռավոր Ամասիայի Ղրղլդաշ գյուղի 67-ամյա կոլտնտեսական Մ. Հարոյանը։ Իր անձնական տնտեսությունից նա մայիսմեկյան նվերներ բերեց վիրավորներին՝ 143 կգ. միս, 21 կգ. պանիր, 300 հատ ձու։ Հանձնելով նվերը՝ նա ասաց. «Ես շատ եմ ափսոսում, որ անձամբ չեմ կարող մասնակցել հիտլերյան բանդաների դեմ մղվող կռիվներին։ Իմ նվերը ռազմիկներին՝ թող լինի ես մի հարված ֆաշիստներին»[17]։

Շատ կոլտնտեսականներ կաղրեր էին պատրաստում էվակոհոսպիտալներում աշխատելու համար՝ այդ նպատակով կազմակերպված սանիտարական գործի ուսումնասիրման դասընթացներում։ Պարապմունքները անցկացնում էին բուժկաղրերը։

Հակահամաճարակային միջոցառումները իրականացնելու և էվակոհոսպիտալներում ռազմիկների բուժման գործում անձնուրաց աշխատանքի համար դեռևս պատերազմի առաջին շրջանում միութենական կառավարությունը պարգևատրեց ՍՍՀՄ առողջապահության ժողկոմատի մի խումբ աշխատողների, նրանց թվում հինգ հոգու Հայկական ՍՍՀ-ից։

Հանրապետական, քաղաքային և շրջանային թերթերը պատերազմի տարիներին մշտապես լուսաբանում էին էվակոհոսպիտալների կատարած աշխատանքը։ Թերթերը հրապարակում էին անվանի պրոֆեսորներ Շարիմանյանի, Մելքոնյանի, Յոլյանի, Պետրոսյանի, Քերոբյանի, Անֆիմովի, Միրտովսկու, Հարությունյանի, Մեհրաբյանի և ուրիշների հոդվածներն ու ելույթները, որոնք էվակոհոսպիտալներում սիստեմատիկաբար կոնսուլտացիոն աշխատանք էին տանում։ Պրոֆեսոր Ռուբեն Յոլյանը իր հոդվածում պատմելով արյան փոխներարկման անհրաժեշտության մասին, միաժամանակ հիշատակում է հայրե-

14 ՍՍՀՄ ՊՄ արխիվ, ֆ.էջ 1569, ց. 10, ա.- 921, թ. 7—8։
15 «Коммунист», 7 մայիսի 1942 թ.։
16 Նույն տեղում, 11 փետրվարի 1942 թ.։
17 «Коммунист», 1 մայիսի 1942 թ.։

նասեր շատ դոնորների անուններ, որոնք մեծ պատրաստակամությամբ իրենց արյունը տալիս էին վիրավորներին բուժելու համար։ Հանրապետությունում 1941—1945 թթ. ավելի քան 5000 դոնոր իրենց արյամբ փրկեցին շատ վիրավոր ռազմիկների կյանքը։

1942 թ. ամռանը ստեղծված իրադրությունը ստիպեց ավելացնելու անդրկովկասյան հանրապետություններում եղած էվակոհոսպիտալների մահճակալների թիվը։ Հայաստանում դրանք պետք է ավելանային ոչ պակաս 30 տոկոսով, որպեսզի Սոչիից այստեղ տեղափոխվեին նոր 10 էվակոհոսպիտալներ՝ 2500 մահճակալով։

Թերթերը տեղական կազմակերպություններին կոչ էին անում օգտագործել բոլոր հնարավոր միջոցները (առանձին շենքերի, ակումբների անկյուններ ու միջանցքներ) նոր վիրավորներին ընդունելու համար։

1942 թ. սեպտեմբերին հանրապետական թերթերը բարձրացրին հիվանդ վիրավորների տեղաբաշխումը և կոմպլեքս բուժումը ճիշտ կազմակերպելու կարևոր հարցը։ Թերթերի ելույթից հետո էվակոկայանի վարչությունը և ՀՍՍՀ առողջապահության ժողկոմը ստեղծեցին վիրավոր և հիվանդ ռազմիկների տեղաբաշխման խումբ, որը նպաստեց նրանց համապատասխան հոսպիտալներում ավելի կարճ ժամկետում տեղավորելուն[18]։

Վիրավորներին օգնություն ցույց տալու գործում մեծ աշխատանք կատարեցին շրջանային գինկոմիսարիատներին կից ստեղծված կանանց խորհուրդները, որոնց շնորհակալ գործունեությունը միշտ էլ գտնվում էր մամուլի տեսադաշտում։ Թերթերը միաժամանակ լայնորեն լուսաբանում էին հոսպիտալների շեֆությունը վերցրած կազմակերպությունների գործունեությունը, որոնք զբաղված էին կուլտուրական սպասարկման հարցերով, կազմակերպում էին համերգներ, հերթապահում էին ծանր հիվանդների մոտ, նրանց համար ընթերցում էին թերթեր, անց էին կացնում զրույցներ, նամակներ գրում, կերակրում և այլն։

Հանրապետության կուսակցական մամուլը առաջադրեց կարևոր հարց՝ վիրավորված ռազմիկների առողջությունն ավելի կարճ ժամկետներում վերականգնելու, կոմպլեքս բուժում կազմակերպելու համար փնտրել նոր միջոցներ ու հնարավորություններ, ընդարձակել կուրորտները։ «Սովետական Հայաստան» թերթը 1942 թ. օգոստոսի համարներից մեկում հաղորդում է, որ կարմիր բանակի զինվորների և հրամանատարների բուժման համար հանրապետության գեղատեսիլ վայրում բացված է նոր սանատորիա՝ Ջերմուկը։ Այնտեղ պատերազմի տարիներին կազդուրվեցին ավելի քան 2000 մարտիկներ։

Շնորհիվ բուժսպասարկման անձնակազմի անձնազոհ աշխատանքի, տեղի բնակչության հոգատար վերաբերմունքի, վիրավորված ռազմիկների 75,2 տոկոսը և հիվանդների 91,7 տոկոսը բուժվեցին հոսպիտալներում, վերադարձան սովետական բանակի շարքերը և շարունակեցին կռվել թշնամու դեմ։

Բուժված և շարք վերադարձած ռազմիկները չէին մոռանում իրենց նկատմամբ բուժանձնակազմի և բնակչության կողմից ցուցաբերված հոգատարության և ուշադրության մասին, ուղարկում էին շնորհակալական նամակներ, որոնք հաճախակի հրատարակվում էին թերթերի էջերում։ Ռազմիկները մասնավորապես մեծ գովասանքով էին խոսում հոսպիտալների պետերի՝ Մանթաշ-

---

18 ՀՍՍՀ ՀՀՍՇ ՊԿԱ, ֆ. 40/113, ց. 6, գ. 69, թ. 114։

յանի, Սիմոնյանի, Նեմարովսկու, պրոֆեսոր Պետրոսյանի, բժիշկներ Արալիխինայի, Սահակյանի, Դավթյանի և շատ ուրիշների մասին։

Կարմիր խաչի հանրապետական միությունը իր հերթին միայն պատերազմի առաջին շրջանի 7 ամսվա ընթացքում պատրաստեց 950 սանիտարներ, 946 բուժքույրեր, 2770 սանդրուժիններ[19]։

Խմբագրությունների աշխատակիցները հաճախակի լինում էին էվակոհոսպիտալներում, թերթերի էջերում սիստեմատիկաբար հանդես գալիս ինֆորմացիաներով, բուժկազմի աշխատանքների, հոսպիտալների վիճակի մասին։

Թերթերը միաժամանակ մեծ ուշադրություն էին դարձնում հաշմանդամներին զանազան օգնություն կազմակերպելու, նրանց աշխատանքի ընդունման, բնակարանով ապահովելու հարցերին։ Թերթերը հարց հարուցեցին հաշմանդամներին բազմակողմանի օգնություն կազմակերպելու համար։ «Կոմունիստ» թերթը գրում էր. «Անհրաժեշտ է էլ ավելի ուժեղացնել ուշադրությունն ու հոգատարությունը հայրենիքի պաշտպաններին՝ Հայրենական պատերազմի հաշմանդամներին։ Ոչ մի խնդրանք չպետք է նայվի ուշացումով, կամ մնա առանց արագ պատասխանի»[20]։

Իրոք, պատերազմի առաջին իսկ տարվանից հաշմանդամներին համապատասխան աշխատանքով ապահովելու նպատակով հանրապետությունում կազմակերպվեցին բազմաթիվ կուրսեր՝ հաշվապահների, դերձակների, ձևարարների, կոշկակարների և այլն։ Արվում էր ամեն հնարավորը, որպեսզի հայրենիքի ազատության համար արյունը թափած և առողջությունը կորցրած սովետական մարդիկ մշտապես զգային ժողովրդի հոգատարությունը։

---

19 ՍՍՀՄ ՊՄ արխիվ, ՖԷՀ, ց. 2468, ց. 603099, գ. 10, թ. 23։

20 «Коммунист», 12 օգոստոսի 1942 թ.։